

**ՀՀ ԿՐԹՈՒ ԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒ ԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒ ԹՅՈՒՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ**

**ԱՎԵՏԻՍՅԱՆ Լ ԻԼ ԻԹԳԱՌՆԻԿԻ**

**ՏԱՐԲԵՐ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՎ ԿԱՐՏՈՑԻԼԻ ԱՈՂՋ ՏՆԿԱՆՅՈՒԹ  
ՍՏՅՈՒՄԸ ՀՀ ՆԱԽԱԵՌՆԱՅԻՆ ԳՈՏՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

**2.01.02. «Բուսաբուծություն, խաղողագործություն, պղպուծություն և բույսերի պաշտպանություն» մասնագիտությամբ գյուղատնտեսական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայ ցման արեւնախոսություն**

**ՍԵՂՄԱԳԻՐ**

**ԵՐԵՎԱՆ 2016**

---

**МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА  
НАЦИОНАЛЬНЫЙ АГРАРНЫЙ УНИВЕРСИТЕТ АРМЕНИИ**

**АВЕТИСЯН ЛИЛИТ ГАРНИКОВНА**

**ПОЛУЧЕНИЕ ЗДОРОВОГО ПОСАДОЧНОГО МАТЕРИАЛА КАРТОФЕЛЯ  
РАЗНЫМИ СПОСОБАМИ В УСЛОВИЯХ ПРЕДГОРНОЙ ЗОНЫ РА**

**АВТОРЕФЕРАТ**

**Диссертации на соискание ученой степени кандидата сельскохозяйственных наук по специальности 06.01.02. “Растениеводство, виноградарство, плодоводство и защита растений”**

**ЕРЕВАН 2016**

Ատենախոսությունների թեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական խորհրդի նիստում


Գիտական ղեկավար՝ գ.գ.դ., պրոֆեսոր Ա.Ճ.  
Մելիքյան  
Պաշտոնական ընդդիմախոսներ՝ գ.գ.դ., պրոֆեսոր՝ Հ.Վ.  
Հովսեփյան  
գյուղ. գիտ. թեկնածու՝ Ա.Զ.  
Սահակյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀԳՆ  
«Երկրագործության գիտական կենտրոն»

Պաշտպանությունը տեղի կունենա 2017 թվականի հունվարի 24-ին, ժամը 14<sup>00</sup>-ին Հայաստանի ազգային ագրարային համալսարանում գործող 011 (Ագրոնոմիա) մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0009, ք. Երևան, Տերյան փող. 74, I մասնաշենք, 425 սարան):

Ատենախոսությունը կարելի է ծանոթանալ ՀԱԱՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016թ. դեկտեմբերի 14-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,  
գյուղ. գիտ. թեկնածու, դոցենտ՝ Գ.Վ.  
Ավագյան 

Тема диссертации утверждена на ученом совете Национального аграрного университета Армении

Научный руководитель: доктор с/х наук, профессор А.Ш. Меликян

Официальные оппоненты: доктор с/х наук, профессор Г.В. Овсепян  
кандидат с/х наук А.Дж. Саакян

Ведущая организация: Н/Ц Земледелия МСХ РА

Защита диссертации состоится 24-ого января 2017г. в 14<sup>00</sup> часов на заседании специализированного совета 011 (Агрономия) при Национальном аграрном университете Армении, по адресу 0009, Ереван, ул. Теряна 74, (1 корпус, 425 аудитория).

С диссертацией можно ознакомиться в библиотеке НАУА.

Афтореферат диссертации разослан 14-ого декабря 2016г.

Ученый секретарь специализированного совета,



кандидат с/х наук, доцент

Г.В. Авакян

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒ Ր ԲՆՈՒ ԹԱԳԻՐԸ

**Աշխատանքի արդիականության նշանը:** Կարտոֆիլն արժեքավոր պարենային, կերային և տեխնիկական մշակաբույս է, որը համարվում է մարդու սննդի և կենդանիների կերակրացանկի հիմնական բաղադրիչներից մեկը: Ողջ աշխարհում այն իր էներգետիկ արժեքով զբաղեցնում է հիևգերորդ տեղը, իսկ մարդու կողմից օգտագործելիում է թյամբ չորրորդ տեղը՝ բրնձից, հացահատիկից և եգիպտացորենից հետո: Այս տեսանկյունով էլ կարտոֆիլն ունի բացառիկ կարևոր նշանակություն՝ պարենային պրոբլեմի լուծման և ազգաբնակչությանը սննդով ապահովելու գործում:

Այս չափազանց արժեքավոր և իրավամբ «երկրորդ հաց» համարվող մշակաբույսի մշակության արդյունավետության բարձրացման գործում առաջնահերթ խնդիրներից մեկը համարվում է բարձրորակ և էժան տնկանյութի ստացումը: Զաքվի առնելով այն հանգամանքը, որ ստացվող արտադրանքի ինքնարժեքի մեջ զգալի մաս է կազմում տնկանյութի արժեքը, էլ ավելի է կարևորվում բարձրորակ տնկանյութի արտադրումը:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Աշխատանքի բուն նպատակն է եղել ՀՀ նախալեռնային գոտու պայմաններում ստանալ կարտոֆիլի առողջ տնկանյութ՝ կատարելով ամառային տնկումներ և վաղ բերքահավաք, ինչպես նաև վիրուսազերծ պալարների (մինիպալար) օգտագործմամբ ստանալ էլիտային տնկանյութ և պարզել տարբեր եղանակներով ստացված տնկանյութի տնտեսական արդյունավետությունը:

Նշված նպատակն իրագործելու համար խնդիր է դրվել՝

- Պարզել, թե կիրառված ագրոմիջոցառումներից (ամառային տնկումներ, վաղ բերքահավաք) ո՞րն է առավել արդյունավետը և նպատակահարմարը օգտագործելու ՀՀ նախալեռնային գոտու պայմաններում կարտոֆիլի առողջ տնկանյութի ստացման և բերքատու հատկությունների բարձրացման համար:

- Ուսումնասիրել, թե ամառային տնկումներից և վաղ բերքահավաքից ստացված առողջ տնկանյութով զարնանային տնկումներ կատարելիս ցանքերը հետագայում ինչպիսի՞ արդյունավետություն են ապահովում:

- Գտնել վիրուսազերծ պալարներից էլիտային տնկանյութի ստացման հնարավորությունները ՀՀ նախալեռնային գոտու պայմաններում:

**Ակնկալվող արդյունքը:** Մեր կողմից կատարված ուսումնասիրությունների և նախատեսված ագրոտեխնիկական միջոցառումների իրականացման

արդյունքում հնարավորություն կտրվի գյուղացիական ու  
ֆերմերային տնտեսություններին նվազագույն  
ծախսումներով, սեփական միջոցներով բազմացնել և  
օգտագործել կարտոֆիլի առողջ տնկանյութ, ինչն էլ իր  
հերթին կնպաստի բերքատվության բարձրացմանն ու  
ֆերմերային տնտեսությունների եկամուտների էական  
ավելացմանը:

**Աշխարհի գիտական նորույթն ու գործնական  
նշանակությունը:** Ուսումնասիրվող գոտու բնակչի մայական  
պայմանների համար կարտոֆիլի առողջ, վիրուսագերծ  
տնկանյութի ստացմանն ուղղված նմանատիպ  
հետազոտությունները չեն ունեցել նախադեպը և այն մեր  
կողմից կատարվել է առաջին անգամ: Ուսումնասիրվել են  
ամառային տնկումների և վաղ բերքահավաքի միջոցով  
տնկանյութի ստացման տեխնոլոգիաները, որոնք համեմատվել  
են ավանդական գարնանային տնկումների միջոցով  
տնկանյութի ստացման եղանակի հետ և նման ձևով ստացված  
տնկանյութով հետագա տարիներին կատարվել են գարնանային  
տնկումներ արտադրական նպատակով:

Հավի առնելով այն հանգամանքը, որ նախալեռնային  
գոտու պայմանները նպաստավոր են կարտոֆիլի առողջ  
տնկանյութի ստանալու համար, նպատակ է դրվել  
փորձարարական աշխատանքների արդյունքների ամփոփումից  
հետո տարածաշրջանի գյուղացիական ֆերմերային  
տնտեսություններին առաջարկել մեր կողմից փորձարկվող  
տնկանյութի առողջացման տարբերակներից  
ամենաարդյունավետը, որը հնարավորություն կընձեռի  
նվազագույն ծախսումներով և սեփական միջոցներով ստանալ  
կարտոֆիլի անհրաժեշտ քանակի առողջ և բարձրորակ  
տնկանյութ:

Գիտափորձերը ներդրվել են Կոտայքի մարզի Նոր գյուղ և  
Արզական համայնքների կարտոֆիլ արուծությամբ զբաղվող  
ֆերմերային տնտեսություններում:

**Աշխարհի փորձառաջնությունը:** Ատենախոսության  
հիմնական դրույթները պարբերաբար գեկուլցվել են ՀԱՀ  
«Բուսաբուծություն և բանջարաբուծություն» ամբիոնի  
նիստերում և ՀԱՀ ամենամյա միջազգային  
գիտաժողովներում: Ատենախոսության հիմնական  
դրույթները հրատարակվել են 6 գիտական հոդվածներում:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:**  
Ատենախոսությունը շարադրված է 138 համակարգչային էջի  
սահմաններում և բաղկացած է ներածությունից, 7  
գլուխներից, ընդհանուր եզրակացություններից և  
առաջարկություններից, օգտագործված գրականության  
ցանկից, որը ներառում է 202 անուն և հավելվածից:

Ատենախոսության մեջ ներառված են 4 սխեմաներ, 16 հաշվարկային աղյուսակներ, 25 գծապատկեր և 9 լուսանկար:

## ՆՇԻԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

### **Գլուխ 1. Տարածաշրջանի բնակլիմայական պայմանները:**

Այս գլխում մանրամասն բերված են Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանի բնակլիմայական պայմանների և տարածված հողատիպերի բնութագիրը:

**Գլուխ 2. Գրականության ակնարկ:** Գլուխը բաղկացած է 5 ենթաբաժիններից, որտեղ տեղ են գտել ինչպես հայրենական, այնպես էլ արտերկրի միջառք հետազոտողների կողմից իրականացված համանման ուսումնասիրությունների արդյունքները:

**Գլուխ 3. Փորձի պայմանները, սխեման և մեթոդը:** Փորձադաշտը, որտեղ իրականացվել են գիտական հետազոտությունները գտնվում է Արարատյան դաշտի նախալեռնային գոտում՝ Կոտայքի մարզի Աբովյանի տարածաշրջանում, ծովի մակերևույթից 1400 մ բարձրության վրա: Փորձերը դրվել են 2007-2010թթ-ին 3 կրկնողության և ուսումնասիրությունները տարվել են Իմպալա, Նասկի, Լատոնա սորտերի հետ: Յուրաքանչյուր փորձամարզի մեծությունը կազմել է 30 մ<sup>2</sup>, մինիպալարների դեպքում՝ 6 մ<sup>2</sup> (40x30 սխեմայով), իսկ հետագա տարիներին՝ 70x30 տնկման սխեմայով (30 մ<sup>2</sup> փորձամարզերով):

Փորձարարական աշխատանքներն իրականացվել են մի քանի ուղղություններով՝

1. Ամառային տնկումների և վաղ բերքահավաքի միջոցով տնկանյութի ստացում, որը համեմատվել է ավանդական գարնանային տնկումներից ստացված տնկանյութի հետ:

2. Ամառային տնկումներից և վաղ բերքահավաքից ստացված տնկանյութով գարնանային տնկումներ, որը նույնպես համեմատվել է ավանդական գարնանային տնկումների հետ:

3. Փորձարկվող նույն սորտերի մինիպալարներից էլիտային տնկանյութի ստացում:


Փորձի բոլոր տարբերակներում կատարվել են նախատեսված \$էնուլոգիական դիտումներ, հաշվարկներ և կշռումներ, որոնց արդյունքների հիման վրա կազմվել են համապատասխան աղյուսակներ և գծապատկերներ:

### **Գլուխ 4. Կարտոֆիլի տնկանյութի ստացման եղանակները:**

Աշխատանքի փորձարարական մասը բաղկացած է երեք գլուխներից՝ ընդ որում դրանցից առաջինը նվիրված է ուսումնասիրվող տարբերակներից այն տարբերակի ընտրությանը, որը կարող է ապահովել ամենաբարձր արդյունավետությունը կարտոֆիլի առողջ տնկանյութի անցման գործում:

**4.1. Տնկման տարբեր ժամկետների և բերքահավաքի եղանակի ազդեցությունը կարտոֆիլի ֆենոլոլի էրի անցման ժամկետների վրա:** Ուսումնասիրության բոլոր տարիների ընթացքում իրականացվել են ֆենոլոգիական դիտումներ՝ ֆիքսելով աճի ու զարգացման փուլերի տևողությունը և անցման դիսամիկան, որի արդյունքում էլ որոշվել է փորձարկվող բոլոր սորտերի վեգետացիոն շրջանի տևողությունը բոլոր տարբերակների համար և այն ներկայացված է թիվ 1 գծապատկերում:

Պարզվել է, որ ամառային տնկումների դեպքում բույսերի վեգետացիոն շրջանը կրճատվել է մոտ մեկ շաբաթով ավանդականի հետ համեմատ, որը պայմանավորված է շերմային գործոնով:



Գծապատկեր 1) Տնկանյուն թի ստացման տարբեր եղանակների դեպքում

կարտոֆիլի բույսերի վեգետացիոն շրջանի տևողությունը (օր)

**4.2. Տնկման տարբեր ժամկետների և բերքահավաքի եղանակի ազդեցությունը կարտոֆիլի կենսաչափական ցուցանիշների և բերքի կառուցվածքային տարրերի վրա:**

Կիրառված ագրոմիջոցառումներն իրենց ազդեցությունն են ունեցել կարտոֆիլի կենսաչափական ցուցանիշների (առնախօսուելան թիվ 4.2.1 գծապատկեր), բերքի կառուցվածքային տարրերի և վերջինիս քանակի վրա (թիվ 1 աղյուսակ):

Ամառային տնկումների դեպքում ցողունների միջին թիվն ըստ տարիների կազմել է 4.6-6.7, իսկ ավանդական զարնանայինի դեպքում այն չի գերազանցել 3.8-5.4 ցողունը: Դիտվել է նաև ուղղակի կապ բույսերի ցողունների և ձևավորած պալարների թվի միջև:

Ուսումնասիրության տարիների (2007-2009թթ.) ընթացքում ավանդական տնկումների դեպքում նկատվում է բերքի աստիճանական անկում, որը հմայլ այի մոտ 271.3-ից նվազել է հասնելով 185.6 գ/հա: Ըստ տարիների նվազման միտում է դիտվել նաև տնկանյութի առումով փորձարկվող բույր սորտերի մոտ, որը հմայլ ա սորտի մոտ 40.7-ից հասել է 33.5 գ/հա-ի:

Ամառային տնկումների տարբերակում փորձարկվող բույր սորտերն իրենց բերքատվությամբ զգալիորեն գերազանցում են ավանդական տնկումների ցուցանիշներին և այդ օրինակ ափսոսելով է ուսումնասիրության բույր տարիների ընթացքում: Ըստ տարիների ամառային տնկումների բերքատվությունը ավանդական գարնանային ցանքերի համեմատ գերազանցել է 33.3-38.0 (հմայլ ա), 28.3-35.9 (Նևսկի), 34.0-38.8 % (Լատոնա): Համեմատելով կարտոֆիլի ավանդական գարնանային տնկման և գարնանը տնկված, սակայն վաղ բերքահավաք իրականացված

Աղյուսակ 1

Բերքի կառուցվածքային տարրերը կարտոֆիլի տնկանյութի ստացման տարբերակներում

Տնկանյութի ստացման տարբերակներ	Տարեթիվը	Սորտը	Մեկ թփի			Բերքատվությունը, գ/հա	Որից					
			ցողուններ, հատ	լավ արներ, հատ	լավ արների կշիռը, գրամ		մինչև 50գ		տնկանյութ, 50-80գ		ապրանքային բերք, 80գ և ավելի	
							գ/հա	%	գ/հա	%	գ/հա	%
Ավանդական տնկում	2007թ.	հմայլ ա	5.4	5.3	570.0	271.3	27.1	10.0	40.7	15.0	203.5	75.0
		Նևսկի	3.8	5.0	440.0	209.4	20.1	9.6	31.4	15.0	157.9	75.4
		Լատոնա	4.1	5.9	424.0	201.8	19.8	9.8	40.4	20.0	141.6	70.2
	2008թ.	հմայլ ա	4.7	5.3	480.0	228.5	25.1	11.0	36.6	16.0	166.8	73.0
		Նևսկի	4.2	4.4	370.0	176.1	15.0	8.5	26.8	15.2	134.3	76.3
		Լատոնա	5.1	5.2	365.0	173.7	11.0	6.3	32.4	18.7	130.3	75.0
	2009թ.	հմայլ ա	4.4	4.9	390.0	185.6	19.1	10.3	33.5	18.0	133.0	71.7
		Նևսկի	4.0	3.7	285.0	135.7	15.2	11.2	20.4	15.0	100.1	73.8
		Լատոնա	3.3	4.4	270.0	128.5	13.5	10.5	26.3	20.5	88.7	69.0
Sx%=1.5% UES <sub>05</sub> =8.8g												
Կարտոֆիլի վաղ	2007թ.	հմայլ ա	5.4	5.3	445.0	207.8	35.7	17.2	93.5	45.0	78.6	37.8
		Նևսկի	3.8	5.0	350.0	166.6	29.0	17.4	64.5	38.7	73.1	43.9
		Լատոնա	4.1	5.9	366.6	174.5	30.6	17.5	70.9	40.7	73.0	41.8



	2008թ.	Իմպպլա	5.3	6.0	435.0	207.1	39.8	19.2	87.0	42.0	80.3	38.8
		Նևսկի	4.4	4.9	350.0	166.6	23.3	14.0	75.6	45.4	67.7	40.6
		Լատոնա	5.0	6.3	363.0	172.8	36.4	21.1	85.7	49.6	50.7	29.3
	2009թ.	Իմպպլա	4.4	7.2	441.0	209.9	22.6	10.8	98.8	47.1	88.5	42.2
		Նևսկի	3.9	5.6	354.0	168.5	17.8	10.6	72.5	43.0	78.2	46.4
		Լատոնա	3.4	6.4	366.0	174.2	19.7	11.3	86.5	49.7	68.0	39.0
Sx%=1.2% UES <sub>05</sub> =8.3g												
Պալ արների ամտային տնկում	2007թ.	Իմպպլա	6.7	8.5	670.0	318.9	30.8	9.7	95.7	30.0	192.4	60.3
		Նևսկի	4.6	6.7	590.0	280.8	27.4	9.8	78.6	28.0	174.8	62.3
		Լատոնա	5.4	8.8	780.0	371.3	50.8	13.7	122.2	32.9	198.3	53.4
	2008թ.	Իմպպլա	7.3	8.4	664.0	316.0	36.5	11.6	107.6	34.1	171.9	54.4
		Նևսկի	6.1	7.8	584.0	278.0	30.2	10.9	94.5	34.0	153.3	55.1
		Լատոնա	7.3	8.9	774.0	368.4	45.9	12.5	132.6	36.0	189.9	51.5
	2009թ.	Իմպպլա	6.2	8.6	672.0	319.9	34.6	10.8	121.5	38.0	163.8	51.2
		Նևսկի	5.4	6.7	588.0	279.9	28.9	10.3	100.8	36.0	150.2	53.7
		Լատոնա	7.0	9.2	756.0	359.9	40.2	11.2	144.0	40.0	175.7	48.8
Sx%=1.1% UES <sub>05</sub> =13.1g												

տարբերակներում պալ արների քանակի և բերքատվության ցուցանիշները, որն ակնառու կերպով երևում է Իմպպլա սորտի օրինակով (2007թ.) մեկ թփի պալ արների միջին քանակը եղել է 5.3 պալ ար և բերքատվությունը կազմել է 271.3 g/հա, իսկ գարնանը տնկված, սակայն վաղ ժամկետում բերքահավաք կատարված տարբերակում այդ ցուցանիշները համապատասխանաբար եղել են՝ 5.3 պալ ար և 207.8 g/հա:

Բերքատվության նմանատիպ տնկումը, սակայն ողջ բերքի մեջ տնկանյութի տոկոսային պարունակության ավելացումը, պայմանավորված է վաղաժամկետ բերքահավաքով, երբ դուստր պալ արները չեն հասնում սորտին բնորոշ չափերին ու կշռին և այդ օրինակ ախուր ղուկները դիտվել է փորձարկվող բոլոր տարիների ընթացքում:

Ամառային տնկումներից ստացված բարձր բերքի մեջ մեծ տոկոս է կազմում նաև ստացված տնկանյութի քանակը, որն ըստ ուսումնասիրության տարիների Իմպպլա սորտի մոտ եղել է 95.7-121.5, Նևսկի սորտի մոտ՝ 78.6-100.8, իսկ Լատոնա սորտի մոտ՝ 122.2-144.0 g/հա, որոնք ավելի քան երեք անգամ գերազանցում են ավանդական տնկումների նույն ցուցանիշներին:

**4.3. Տնկման տարբեր ժամկետների և բերքահավաքի եղանակի ազդեցությունը կարտոֆիլի պլազի քիմիական կազմի և տերևային մակերեսի վրա:** Գիտական հետազոտությունները ընթացքում ոչ պակաս կարևոր նշանակություն է ունեցել նաև այն հարցի ուսումնասիրումը, թե տարբեր եղանակով կարտոֆիլի տնկանյութի արտադրումն ինչպիսի ազդեցություն է ունեցել պլազի քիմիական կազմի և որակական հատկանիշների վրա: Այդ նպատակով ՀԱՀ Ազրոքիմիական լաբորատորիայում կատարվել է պլազների քիմիական անալիզ և ստացված ցուցանիշներն ամփոփվել են թիվ 2 աղյուսակում:

Աղյուսակ 2

Տարբեր եղանակներով ստացված տնկանյութի պլազի քիմիական կազմը

Տնկանյութի ստաբիլիզատորներ	Սորտը	Չորայություն, %	Օսլայ, %	Պարունակությունը, %			
				P <sub>2</sub> O <sub>5</sub>		K <sub>2</sub> O	
				թարմ նմուշում	չոր նմուշում	թարմ նմուշում	չոր նմուշում
Ավանդակա տնկում	Իմպալա	20.05	19.66	0.20	0.89	0.53	2.54
	Նևսկի	20.84	18.75	0.17	0.78	0.50	2.20
	Լատոնա	21.30	20.71	0.14	0.73	0.42	2.23
Գարնանը տնկված պլազների վաղ բերքահավաք	Իմպալա	17.83	15.22	0.20	0.91	0.56	2.63
	Նևսկի	18.16	14.58	0.17	0.78	0.52	2.37
	Լատոնա	18.89	15.72	0.16	0.73	0.48	2.25
Պլազների ամառային տնկում	Իմպալա	18.62	17.57	0.21	0.90	0.54	2.60
	Նևսկի	18.89	16.44	0.18	0.80	0.50	2.21
	Լատոնա	19.95	18.42	0.16	0.75	0.46	2.24

Անալիզների ընթացքում մասնավորապես որոշվել է պլազներում առկա չոր նյութերի, օսլայի քանակը և P<sub>2</sub>O<sub>5</sub>-ի ու K<sub>2</sub>O-ի տոկոսային պարունակությունը թաց և չոր նմուշներում: Վերջիններիս մեծությամբ էլ մեծապես այս մասնավորված է պլազների պահուսակությունը:

Չոր նյութերի և օսլայի ամենաբարձր պարունակությունը դիտվել է ավանդակա գարնանային տնկումների տարբերակում, որտեղ դրանք համապատասխանաբար կազմել են 20.05-21.30 և 18.75-20.71 %:

Մորֆոլոգիկան ցուցանիշներից ոչ պակաս կարևոր նշանակություն ունի նաև տերևային մակերեսը (առնախոստովան թիվ 4.3.2 աղյուսակ), ըստ որի իրեն հավասարը չի ունեցել պլազների ամառային տնկման տարբերակը, որտեղ այն ըստ երեք տարվա միջին տվյալների տատանվել է 41470-49450 մ<sup>2</sup>/հա սահմաններում: Ընդ որում ամենաբարձր արդյունքը դիտվել է Լատոնա սորտի մոտ (49450 մ<sup>2</sup>/հա): Բացահայտվել է նաև այն ուղղակի կապը, որը գոյություն ունի կարտոֆիլի բույսերի տերևային մակերեսի և ստացվող պլազի բերքատվության մեջ

(առեկախություն թիվ 4.3.1 գծապատկեր), որը գործում է փորձարկվող բոլոր տարբերակների և բոլոր սորտերի համար:

**Գլուխ 5. Տարբեր եղանակներով ստացված կարտֆիլի տնկանյութի փորձարկումը և համեմատական ուսումնասիրությունը գարնանային տնկումների ժամանակ:** Ուսումնասիրությունները երկրորդ փուլում փորձարկվել է տարբեր եղանակներով ստացված տնկանյութի արդյունավետությունը գարնանային տնկումների պարագայում՝ կատարելով արտադրական ցանքեր: Նպատակ է հետապնդում պարզել, թե նախալեռնային գոտու պայմաններում մերկողմից փորձարկված առողջ տնկանյութի ստացման եղանակներից ո՞րն է առավել արդյունավետը և հեռանկարայինը արտադրական պայմաններում կիրառելու նպատակով:


Պետք է նշել նաև, որ փորձարարական աշխատանքների ժամանակ ամեն հաջորդ տարում որպես տնկանյութ օգտագործվել են նախորդ տարում նույն սկզբունքով ստացված պալարները:

**5.1. Տարբեր եղանակներով բուծված տնկանյութով գարնանային տնկման ցանքերում իրականացված \$ենոլ ոգիական ուսումնասիրությունները:** Տարբեր

եղանակներով բուծված պալարների տնկումը կատարվել է ամեն տարվա ապրիլ ամսվա վերջին տասնօրյակում և վեգետացիայի ընթացքում իրականացվել են \$ենոլ ոգիական դիտումներ՝ արձանագրելով բույսերի աճի ու զարգացման փուլերի անցման ժամկետները և վեգետացիոն շրջանի տևողությունները (գծապատկեր թիվ 2):

Ինչպես ամառային, այնպես էլ վաղ բերքահավաքից ստացված պալարների գարնանային տնկման տարբերակում, ավանդական տնկումների համեմատ, վեգետացիոն շրջանը ձգձգվել է, ինչը նպաստել է բույսերի մոտ ծերացման գործընթացի դանդաղեցմանը, որն իր դրական ազդեցությունն է ունեցել վերջիններիս բերքատվության վրա:

\$ենոլ դիտումների երեք տարվա միջին ցուցանիշների արդյունքում պարզ է դառնում, որ անկախ տնկանյութի ստացման եղանակից, երբ տնկումներն իրականացվում են ավանդական գարնանային ժամկետում, իսկ բերքահավաքը կատարվում է փրերի բնական մահացման փուլում, դիտվում է լիարժեք ձևավորված պալարների ստացում՝ սովյալ սորտին բնորոշ սորտային առանձնահատկություններով:



Գծապատկեր 2) Կարտոֆիլի բույսերի վեգետացիոն շրջանի տևողությունը (օր) տարբեր ծագման տնկանյութով գարնանային տնկումների ժամանակ

**5.2. Տարբեր եղանակներով բուծված տնկանյութով գարնանային տնկումներից ստացված բույսերի կենսաախտահարման ցուցանիշները, բերքի կառուցվածքային տարրերը և բերքատվությունը:**

Կատարվել է բերքի կառուցվածքային տարրերի անալիզ և ստացված բերքի քանակը տեսակավորվել, բաժանվել է ըստ ապրանքային խմբերի, որի մեջ մեզ համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում 50 գ-ից բարձր կշիռ ունեցող պալարները (աղյուսակ 3):

Ցողունների թվաքանակի առումով ամենացածր ցուցանիշը դիտվել է ավանդական գարնանային տնկումների տարբերակներում (3.5-5.1 ցողուն), մինչդեռ փորձարկվող մյուս տարբերակներում այն հասնում է մինչև 5.3-7.2 ցողունի:

Մեկ բույսի հաշվով ձևավորված պալարների թվաքանակով բոլոր տարիների ընթացքում (ըստ սորտերի) աչքի են ընկել դարձյալ ամառային տնկումներից և վաղ բերքահավաքից ստացված պալարներով կատարված ցանքերը, որոնք միջին հաշվով 2-3 պալարով գերազանցել են ավանդական վերարտադրության տարբերակին:

Արտադրական ցանքերում պալարի ամենացածր բերքը բոլոր սորտերի մոտ դիտվել է ավանդական գարնանային տնկումների տարբերակում, որտեղ այն 228.5 գ/հա-ից նվազել է՝ հասնելով 117.6 գ/հա-ի (ըստ սորտերի): Պալարի առավելագույն բերքատվության ցուցանիշներով իրեն հավասարը չի ունեցել ամառային տնկումից ստացված

տնկանյ ու թով գարևանը տնկված տարբերակը ինչպես փորձարկման բոլոր տարիների, այնպես էլ բերքի միջին գուցանիչներով:

Աղյուսակ 3

Տարբեր ծագման տնկանյ ու թով գարևանային տնկույմներից ստացված կարտոֆիլի բերքի կառուցվածքային տարրերը

Ստացված տնկանյ ու թով գարևանային տնկման տարբերակներ	Տարեթիվը	Սորտը	Սեյ թվի				Բերքատվույթ ունը, գ/հա	Որից					
			ցողուններ, հատ	պլավարներ, հատ	պլավարների կշիռը, գրամ	մինչև 50գ		տնկանյ ու թ, 50-80գ		ապրանքային բերք, 80գ և ավելի			
						g/հա		%	g/հա	%	g/հա	%	
			Տվյալները										
Սկանդինավյան վերարտադրության պլավարներով	2008թ.	Իմպավա	4.7	5.3	480.0	228.5	25.1	11.0	36.6	16.0	166.8	73.0	
		Նևսկի	4.4	4.5	370.0	176.1	15.0	8.5	26.8	15.2	134.3	76.3	
		Լատոնա	5.1	5.2	365.0	173.7	11.0	6.3	32.4	18.7	130.3	75.0	
	2009թ.	Իմպավա	4.7	4.9	390.0	185.6	19.1	10.3	33.5	18.0	133.0	71.7	
		Նևսկի	4.0	3.7	285.0	135.7	15.2	11.2	20.4	15.0	100.1	73.8	
		Լատոնա	3.5	4.4	270.0	128.5	13.5	10.5	26.3	20.5	88.7	69.0	
	2010թ.	Իմպավա	4.4	4.6	365.0	173.7	51.2	29.5	26.4	15.2	96.1	55.3	
		Նևսկի	3.3	3.5	270.0	128.5	46.8	36.4	13.4	10.4	68.4	53.2	
		Լատոնա	3.5	4.1	245.0	117.6	31.9	27.1	21.3	18.1	64.4	54.8	
Sx%=2.0% UES <sub>05</sub> =10.7g													
Վաղ բեքանակաբից ստացված պլավարներով	2008թ.	Իմպավա	5.5	5.6	760.0	361.8	12.3	3.4	19.9	5.5	329.6	91.1	
		Նևսկի	5.3	5.1	650.0	309.4	15.2	4.9	19.8	6.4	274.4	88.7	
		Լատոնա	5.6	6.7	880.0	418.9	10.1	2.4	19.7	4.7	389.2	92.9	
	2009թ.	Իմպավա	5.8	5.7	770.0	366.5	10.6	2.9	18.3	5.0	337.5	92.1	
		Նևսկի	5.6	5.4	665.0	314.2	12.9	4.1	17.0	5.4	284.4	90.5	
		Լատոնա	5.9	7.8	885.0	421.3	5.5	1.7	11.2	3.5	404.6	94.8	
	2010թ.	Իմպավա	6.1	6.0	780.0	371.3	7.8	2.1	11.9	3.2	351.6	94.7	
		Նևսկի	5.8	7.1	670.0	318.9	9.2	2.9	12.4	3.9	297.2	93.2	
		Լատոնա	6.2	7.8	890.0	423.6	5.9	1.4	8.9	2.1	408.8	96.5	
Sx%=0.8% UES <sub>05</sub> =11.5g													
Ամառային տնկույմից ստացված պլավարներով	2008թ.	Իմպավա	5.6	5.7	720.0	342.7	9.6	2.8	11.7	3.4	321.5	93.8	
		Նևսկի	5.1	5.4	635.0	302.3	11.8	3.9	13.6	4.5	276.9	91.6	
		Լատոնա	5.7	6.9	860.0	409.4	9.4	2.3	13.9	3.4	386.1	94.3	
	2009թ.	Իմպավա	6.2	6.4	755.0	359.4	8.6	2.4	10.8	3.0	340.0	94.6	
		Նևսկի	5.9	5.6	655.0	311.8	9.0	2.9	12.5	4.0	290.3	93.1	

	L ստոն ա	6.6	7.3	890.0	423.6	6.8	1.6	13.6	3.2	403.3	95.2
2010թ.	Իմպալ ա	6.4	6.7	850.0	404.6	7.3	1.8	9.3	2.3	388.0	95.9
	Նևսկի	6.4	5.9	730.0	376.0	8.3	2.2	12.0	3.2	355.7	94.6
	L ստոն ա	7.2	8.4	935.0	445.1	4.9	1.1	8.0	1.8	432.2	97.1
Sx%=1.4% UէS <sub>05</sub> =22.1 g											

Ուսումնասիրության ներքին առաջին տարում (2008թ.) փորձարկվող սորտերի միջին բերքատվությունը հասել է 302.3-409.4 g/հա-ի, իսկ հետագա տարիների ընթացքում այն զգալիորեն աճել է՝ 3.1-3.5 %-ով (2009թ.)՝ հասնելով 311.8-423.6 g/հա նաև 24.4-8.7 %-ով (2010թ.)՝ հասնելով 376.0-445.1 g/հա-ի:

Վաղ բերքահավաքից ստացված պալարներով տնկված տարբերակներում ևս դիտվել են բերքատվության բարձր ցուցանիշներ և ըստ տարիների առկա է աճման միտում, որն ուսումնասիրման երկրորդ տարում կազմել է 4.7-9.5 g/հա, սակայն որոշակի քանակությամբ (66.6-26.2 g/հա-ով) այն դարձյալ հետ է մտնում լավագույն ճանաչված՝ ամառային տնկումների տարբերակից:

Արտադրական ցանքերում պալարի բերքատվության ամենաբարձր ցուցանիշներն ունեցել է L ստոնա սորտը, որն ամառային տնկումների դեպքում ըստ տարիների ապահովել է 409.4-445.1 g/հա, իսկ վաղ բերքահավաքի դեպքում 418.9-423.6 g/հա պալարի բարձրորակ բերք:

Կատարելով բերքի կառուցվածքային տարրերի, պալարի ապրանքային խմբերի անալիզ, ինչպես նաև փաստացի բերքի հաշվարկ, միանշանակորեն կարելի է ենթադրել, որ փորձարկվող տարբերակների մեջ առավել բարձր արդյունավետություն և ապահովում են ամառային տնկումներից ստացված պալարներով իրականացված ցանքերը:


**5.3. Տարբեր եղանակներով բուծված տնկանյութով գարնանային տնկումներից ստացված բույսերի տերևային մակերեսի, հիվանդությունների նկատմամբ դիմացկունություն ուսումնասիրությունը:**

Տերևային մակերեսի և ստացվող պալարի բերքի միջև առկա է ուղիղ համեմատական կապ (առենախոսություն թիվ 5.3.1 գծապատկեր): Եթե ավանդական տնկումների տարբերակում, ըստ փորձարկման տարիների, տերևային մակերեսը նվազել է, ապա ամառային տնկումների և վաղ բերքահավաքի դեպքում, ընդհակառակը, այն աճում է: Ընդ որում, վերջիններիս դեպքում ամենամեծ տերևային մակերեսն ըստ երեք տարվա միջին տվյալների ապահովել է L ստոնա սորտը՝ 56210 մ<sup>2</sup>/հա (վաղ բերքահավաք) և 57490 մ<sup>2</sup>/հա (ամառային տնկումներ) ցուցանիշներով:


Գիտափորձերի ընթացքում ուսումնասիրվել է կիրառված ազդումիջոցառումների ազդեցությունը կարտոֆիլի բույսերի ինչպես սնկային (ֆիտոֆտորոզ), այնպես էլ

վիրուսային (կնճռոտ մոզաիկա, տերևների ոլորում) հիվանդությունների նկատմամբ դիմացկունությունը և պարզվել է այն կապն ու կախվածությունը, որն առկա է բույսերի հիվանդություններով վարակվածության և ստացվող բերքի քանակի միջև (գծապատկեր 3 և 4):

Այստեղ հիվանդություններով վարակվածության աստիճանի և բերքատվության միջև գոյություն ունի հակադարձ համեմատական կապ:



Գծապատկեր 3) Տարբեր ծագման տնկանյութով գարնանային տնկման տարբերակում բույսերի ֆիտոֆտորոզով վարակվածության (%) և բերքատվության (g/ha) միջև եղած կապը (ըստ 3 տարվա միջինի):



Գծապատկեր 4) Տարբեր ծագման տնկանյութով գարնանային տնկման տարբերակում բույսերի վիրուսային հիվանդություններով վարակվածության (%) և բերքատվության (գ/հա) միջև եղած կապը (ըստ 3 տարվա միջինի)

**Գլուխ 6. Կիրուսագերծ պալարներով կարտֆիլի տարբեր սորտերի տնկանյութի արտադրությանը:** Գիտահետազոտական աշխատանքների երրորդ փուլում նպատակ էր դրվել ստանալ առողջ տնկանյութ՝ օգտագործելով կարտֆիլի տարբեր սորտերին (Իմպալա, Նևակի և Լատունա) պատկանող 50-ական միևնույն պարտեզներ, որոնք ձեռք են բերվել ՀԱՀ «Ագրոկենսատեխնոլոգիայի գիտական կենտրոն» մասնաձյուղից:


Ումնափորությանների ընթացքում պահպանվել են ագրոկենսատեխնոլոգիայի փնտրման և մշակության բոլոր աշխատանքները:

**6.1. Կարտֆիլի միևնույն պարտեզի ստացված բույսերի ֆենոլոլոգիայի անցման ժամկետների ուսումնասիրությանը:** Միևնույն պարտեզով կատարված տնկարկներում բույսերի աճի ու զարգացման գործընթացներին հետևելու նպատակով վեգետացիայի ընթացքում իրականացվել են ֆենոլոգիական դիտումներ՝ հետևելով բույսերի աճման դինամիկային՝ որոշելով վեգետացիոն շրջանի տևողությունն օրերով (գծապատկեր 5):

Միևնույն պարտեզով տնկումներ կատարելիս առաջին տարում (2007թ.) դիտվել է վեգետացիոն շրջանի նկատելի երկարաձգում (112-123 օր ըստ սորտերի), մինչդեռ վերջին



(2010թ.) տարում այն կրճատվել է 42-43 օրով՝ կազմելով 69-81 օր:



Գծապատկեր 5) Կարտոֆիլի մինիպալարներով տարբեր վերարտադրության տնկանյութի բույսերի վեգետացիոն շրջանի տևողությունը (օր)

**6.2. Կարտոֆիլի փորձարկվող սորտերի մինիպալարներից ստացված բույսերի կենսաջախական ցուցանիշները, բերքի կառուցվածքային տարրերը և բերքավույությունը:**

Կարտոֆիլի մինիպալարների հետ կատարված ուսումնասիրությունների ընթացքում որոշվել են մի շարք կենսաջախական տվյալներ՝ մասնավորապես տարբեր վերարտադրության (2007-2010թթ.) բույսերի տերևային մակերեսի, ինչպես նաև բույսերի բարձրության դինամիկան (առենախոտության թիվ 6.2.1 և 6.2.2 աղյուսակներ): Փորձարկվող սորտերի մոտ տերևային մակերեսի ամենափոքր ցուցանիշները դիտվել են մինիպալարների տնկման (2007թ.) տարում, երբ այն կազմել է 14820-23950 մ<sup>2</sup>/հա, իսկ հետագա տարիների ընթացքում կարտոֆիլի սորտերը ձևավորում են աստիճանաբար առավել փաթթամ թփեր, որի արդյունքում էլ նկատելիորեն մեծանում են բույսերի ձևավորած տերևային մակերեսները: Դիտվել է ուղիղ համեմատական կապ տարբեր վերարտադրության բույսերի կողմից ձևավորած տերևային մակերեսի և բերքի քանակի միջև:

Բույսերի բարձրության դինամիկան ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ փորձարկման առաջին տարում (2007թ.) ուսումնասիրվող երեք սորտերն էլ ձևավորել են ցածրած բույսեր, որը բնորոշ է եղել մինիպալարներին (22-28 սմ): Արդեն սկսած ուսումնասիրության երկրորդ տարվանից՝ դաշտային առաջին վերարտադրությունից (2008թ.) մինչև

Էլիտայի ստացումը (2010թ.), դիտվում է կարտոֆիլի բույսերի աստիճանական բարձրացում՝ հասնելով մինչև 63-71 սմ և ամենաբարձր բույսերը ձևավորվել են Իմպալ ասորտի մոտ (71 սմ):

Մինիպալ արևերից ստացված բերքի կառուցվածքային տարրերի և փաստացի բերքի ցուցանիշները բերված են թիվ 4 աղյուսակում: Մինիպալ արևերի տնկման առաջին տարում բույսերի սորտերի մոտ ցողունների թիվը չի անցել 1-ի սահմանը, իսկ պալ արևերի միջին թվաքանակը կազմել է 3.4-4.2 պալ ար (ըստ սորտերի): Սակայն հետագա տարիների ընթացքում այդ ցուցանիշները նկատելիորեն աճել են՝ ցողունների թիվը 2010թ-ին հասնելով 5.4-6.1, իսկ պալ արևերի թիվը՝ համապատասխանաբար 6.9-8.5 և մինիպալ արևերի տնկման առաջին տարվա ցուցանիշները գերազանցել 3.5-4.3 պալ արով:

Ըստ ուսումնասիրության տարիների դիտվել է ինչպես մեկ թփից ստացված պալ արևերի թվաքանակի, այնպես էլ պալ արևերի կշռի աճ: Եթե մինիպալ արևերի տնկման առաջին տարում (2007թ.) ստացված մեկ թփի պալ արևերի կշռն ըստ սորտերի տատանվել է 128.0-184.0 գ-ի սահմաններում, ապա չորրորդ տարում այդ ցուցանիշը առաջին տարվա արդյունքը գերազանցել է 241.6-183.4 %-ով՝ կազմելով 437.2-521.5 գ:

Պալ արի բերքի նկատելի աճ է դիտվել սուպերելիտայի տնկման տարում (2010թ.), որտեղ այն ըստ սորտերի կազմել է 203.3-248.2 գ/հա և առաջին տարվա վերարտադրության բերքի ցուցանիշներին գերազանցել է 52.6-66.6 գ-ով, որն էլ ինքնին սպասելի էր՝ կապված մեկ բույսի պալ արևերի կշռի զգալի ավելացման հետ:

Մինիպալ արևերի հետ կատարված ուսումնասիրության տարիների ընթացքում կատարվել է նաև տնկանյութի ելի հաշվարկ և որոշվել ընդհանուր բերքի մեջ վերջինիս քանակը (գ/հա) և տոկոսային պարունակությունը (%): Տնկանյութի ամենաբարձր ելը դիտվել է դաշտային առաջին վերարտադրության տարում, որն ըստ սորտերի կազմել է ողջ բերքի 90.8-95.1 %-ը՝ հասնելով 136.8-172.7 գ/հա-ի:

Աղյուսակ 4

Կարտոֆիլի մինիպալ արևերով տարբեր վերարտադրության տնկանյութի բերքի կառուցվածքային տարրերը

Տարեթիվը և վերարտադրողն էլ	Սորտը	Մեկ թփի			Նյութախումբը՝ g/hա	Տնկանյութի ելը	
		որուններ հատ	պլավարներ, հատ	պլավարների շիռը, գրամ		%	g/hա
2007թ., մինիպլավարների տնկում	Իմպալա	1.0	3.7	170.4	141.7	-	-
	Նևսկի	1.0	3.4	128.1	106.7	-	-
	Լատոնա	1.0	4.2	184.4	153.3	-	-
2008թ., դաշտային առաջին տարվա վերարտադրության պլավարների տնկում	Իմպալա	3.4	4.9	352.3	167.7	93.7	157.1
	Նևսկի	3.1	4.1	316.7	150.7	90.8	136.8
	Լատոնա	3.8	5.2	381.4	181.6	94.6	172.7
2009թ., սուպեր- սուպերէլիտային պլավարների տնկում	Իմպալա	5.4	5.8	413.5	196.8	89.3	175.7
	Նևսկի	3.8	5.3	376.8	179.4	86.9	155.9
	Լատոնա	4.3	6.4	445.7	212.2	90.4	191.8
2010թ., սուպերէլիտային պլավարների տնկում	Իմպալա	6.1	8.2	497.3	236.7	84.2	199.3
	Նևսկի	5.6	6.9	437.2	203.3	83.5	169.8
	Լատոնա	5.4	8.5	521.5	248.2	85.3	211.7
